*550. Խաչ արծաթե, պատվանդանին՝ 3 տող.*

Յ[Ի]Շ[Ա]Տ[Ա]Կ Է ՍՐ ԽԱՉՍ ԿՈՍՏԱՆԴԻՆԱՊՕԼՅԻ/ ՂԱՋԱՐՈՍԻ ՈՐԴԻ ՊԵՏՐՈՍԻՆ, ՆՈՐ ՆԱԽԻՋԵՎԱՆ. Ի Դ[ՈՒ]ՅՌՆ ՍՐ ՆԻԿՈՂԱՈՍԻՆ. ԹՎԻՆ 1806:

Մանոթ. *Պահպանվում է նույն թանգարանում (Ֆ. 6830):*

Հրատ. Ե. Մուշեղյան, 78

*551.* Դանակի շեղբի վրա՝

Ի Վ[Ա]Յ[Ե]Լ[ՈՒ]ՄՆ Ա[Ի]ԷՏ[Ի]Ի Վ[ԱՐ]Դ[ԱՊԵ]ՏԻՆ, ՈՐ Է Պ[Ա]ՏՐ[ԻԱ]ՐԳ ՍՐ ՅԵՐՈՒՍԱՂԷՄԱՅ ԵՒ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼՍՈՅ . ԹՎ. ՌՃՄԱ (1702):

Մանոթ. *1. Դանակը գանվելիս է եղել Դոնի Ռոստովի գրավաճառ. Ռոմանովիչի խանութում:*

*2. Հիշյալ Ավետիք վարդապետը Նահապետ կաթողիկոսի օրոք 1701 թ. ընարվեց Պոլսո պատրիարք: Կարծողներ կան, թե նա է եղել առեղծվածային «Երկաթե դիմակով մարդը»: Աքսորից հինգ տարի հետո՝ 1710 թվականին ընդունեց կաթոլիկություն և. վախճանվեց 1711 թ. հուլիսի 11-ին:*

Հրատ. «Արարատ» 1902, հունվար, էջ 49-52

*552.* Ափսե, *արամադիծը 26 սմ, շրջանակին՝*



ԽՈՒԹԼՈՒՇԱՅ ՌՃԸ (1659):

Հրատ. Ե. Մուշեղյան, 127

*553. Խաչ արծաթե, ընդելուզված դունավոր քարերով, դարդանախշերով: Կոթառին՝ 4 տող.*



Յ[Ի]Շ[Ա]Տ[Ա]Կ Է ԵՍԹԷՐԻ ՈՐԴԻ/ ՄԸԿԸՐՏԻՉԻՆ Ի Դ[ՈՒ]ՅՌՆ ՍՐ/ Ա[ՍՏՈՒԱ]ԾԱԾ/ՆԱՅ ԾԱՌԱՅ ՅԵՂԻՆԱՅ/ ԿՈՒՍԻՆ /. ԹՎ[ԻՆ]. ՌՄԻԱ (1772)ԻՆ:

Հրատ. Ե. Մուշեղյան, 153

## ՏԱԳԱՆՐՈԳ

*Տաղանորդում հնադույն պատմական հուշարձաններ՝ մեր ժողովրդի ներկայացուցիչների ձեռքով կերտած, չեն պահպանվել: Առավել նշանակալից կառույցներից կարելի է համարել Բաղդասարով եղբայրների աուն, որ մեր այցի ժամանակ ծառայում էր իբրև քաղաքի հյուրանոց: Նախասրահի հատակին ռուսերեն գրված է. որ այս աունը կառուցել են 20-րդ դարի սկզբին Բաղդասարով վաճառական եղբայրները:*

*Քուչուկ-Հովհաննիսյանը 1913 թ. հրատարակել է միայն հետաքրքիր արձանագրությունը, որը վերագրում է Կիլիկիայի Կոստանդին Դ (1344-1363) թագավորին:*

*554* Մարմարե սալաքար, *վրան փորագրված է.*

«1336 յամ՝ եկն ախտ ի քաղաքն Սիս... ողորմութեամբ քով սատակեսցես զքշնամիս իմ, կորուսցէս զամենայն նեղիչս անձին իմոյ, զի ես ծառայ քո եմ (Սաղմ. ՃԽԹ): Տեսցեն ատելիք իմ եւ ամաչեսցեն, զի դու Տէր օգնեցեր ինձ եւ մխիթարեցեր զիս (Սազմ. ՁԵ)»:

Հրատ. Ալիշան, Սիսուան, Վենետիկ, 1885, էջ 381,

Кучук-Иоаннесов, Армянская надпись из Таганрога, "Древности Восточные", т. IV, М., 1911, էջ 11:

## ՄԱՅԿՈՊ

### (Կրասնոդարի երկրամասի Ադիգեյական ինքնավար մարզ)

*Հնագույն հայկական հուշարձաններ այստեղ չեն պահպանվել: Միակ հայերեն վիմագրությունը հայտնաբերվել է 1869 թ. Իվան Սերեգայի կողմից Խանսկայա և Բելորեչենսկայա ստանիցաների արանքում*[1]*: Դա Բելայա գետի ափին եղած կիսավեր եկեղեցու բարավորի քարն է, որի վրա ուռուցիկ տառերով փորագրված է եղել.*

*555.* ԿԱՏԱՐԵՑԱՒ ԵԿԵՂԵՑԻՍ / ՁԵՌԱՄԲ ՔԱՐԳՈՐԾ / ԽՐԸՄՊԷԻՆ ԿԱՖԱՑՈՒՆ:

*Մանոթ. Քուչուկ-Հովհաննիսյանը վերծանել է սխալներով և թվագրել է ՈԻ (1171 թ.) Այս արձանագրության հիման վրա նա ենթադրել է, թե «հայ գաղթականները հարավային Ռուսիայում ապրել են 12-րդ դարի երկրորդ կեսից*[2]*: Նույն սխալը կրկնել է Միխ. Լոժկինը*[3]*: Լ. Ս. Խաչիկյանի համոզիչ կարծիքով Խրըմպեյ Կաֆայեցի քարգործը եղել է ղրիմեցի նշանավոր տաղասաց Սիմոն Կաֆայեցու հայրը: Հետևաբար, Բելորեչենսկի եկեղեցին կառուցվել է ոչ թե 1171, այլ 1650-ական թվականներին*[4]*:*

*556.* Հուշատախտակ *սև մարմարից, վրան ելնդավոր տառերով՝ 7 տող.*

ЗДЕСЬ С 1916 ПО 1918 Г./ ЖИЛ ОДИН ИЗ РУКОВОДИТЕЛЕЙ/ РЕВОЛЮЦИОННОЙ МОЛОДЕЖИ МАЙКОПА,/ АКТИВНЫЙ УЧАСТНИК ГРАЖДАНСКОЙ/ И ВЕЛИКОЙ ОТЕЧЕСТВЕННОЙ ВОЙН/ СЕРГЕЙ ГЕОРГИЕВИЧ/ САРКИСОВ.

---

1 М. Ложкин, об армянской церкви XII века в Белореченске. Տե՛ս Հայ արվեստին նվիրված Երկրորդ միջազգային սիմպոզիումի թեզիսներ, Երևան, 1978, էջ 2 և 8: Հմմտ. Н. Марр, Надгробный камень из Семиречья с армянской надписью 1323 г. ЗВАРО, т. VIII, с. 344-345. В. В. Бартольд, Очерк истории Семиречья, Фрунзе, 1945, с. 1945, с. 45: Տե՛ս նաև՝ ՊԲՀ, 1972, № 4, էջ 243-244:

2 Х. Кучук-Иоаннесов, Армянская надпись XII столетия. МАК, вып. III, М., 1893, с. 106-109, илл. 79.

3 «Սովետական Հայաստան» օրաթերթ, 1978, հունվարի 10:

4 Լ. Խաչիկյան, Հայերը Հին Մոսկվայում, էջ 38: